ՀԱՎԱՏԸ ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔ՝
ԸՍՏ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ «ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ»

ՄԱՐԻԱՄ ՄԱՐԳԱՐՅԱՆ, ՄԱՐԻ ԶԱՔԱՐՅԱՆ

Երկիր մոլորակի զարկերակը տրոփում է անչափ լարված ու անհանգիստ. արտակարգ իրավիճակներ, բնական և տեխնածին աղետներ, ահաբեկչություն, անհանդուրժողականություն՝ ուղղված Մարդու, ազգերի, ժողովուրդների և բնության դեմ: Գիտատեխնիկական զարգացումների և տեխնոլոգիական նոր թռիչքների պայմաններում, սակայն, մարդկության զգալի հատվածը մատնված է սովի ու թշվառության: Շուկայականացված իրականությունում սարսափելին Մարդ[1] արարածի՝ լքվածության, օտարվածության և մենության զգացումն է, իսկ թմրամոլությունն ու հարբեցողությունը, համասեռամոլությունն ու մարմնավաճառությունը խաթարում են նրա ներդաշնակ կեցության բանականի և զգայականի սահմանները: Զարմանալի չէ, որ «Որտեղ հաց, այնտեղ կաց» օգտապաշտ մտայնությամբ տարված՝ խարխլվում են ազգային արժեքները և ավանդույթները, իսկ անցողիկ հաճույքներով տարված՝ Մարդը շրջանցում է բարոյական հրամայականները և մարդասիրությունը:

Ակնհայտ է, որ մարդկությունը գոյաբանական ճգնաժամի մեջ է, և այս ծիրում առավել մտահոգիչ է նրա հոգևոր ճգնաժամը, որի արմատները առնչվում են տարաբնույթ հեղափոխությունների հետևանքով ի հայտ եկած պատրանքների հիասթափությանը: Քաղաքակրթության զարգացման փորձը հավաստում է, որ հեղափոխականների խոստացած «բարեկեցությունը» դեռ չվայելած՝ Մարդը սկսում է որոնել դրա ծնած անհանդուրժողականությունը, սոցիալական բևեռվածությունը և ահաբեկչությունը վերացնելու միջոցներ: Նյութապաշտ աշխարհը խժռում է բանական կյանքի արմատը և ընդարձակում զգայականի սահմանները՝ եղծելով Մարդու արարչաստեղծ էությունը, մերժելով հավատը, հույսը և սերը որպես մարդասիրության ակունքի անհրաժեշտության գիտակցում:

Այս համատեքստում էլ կարևորել ենք Արևելքի և Արևմուտքի քաղաքակրթական խաչմերուկներում ապրած, առաջինից երկրորդ հազարամյակներ ձգվող ժամանակահատվածում Մարդու հիմնախնդիրը ուսումնասիրող, տիեզերական մտքի թռիչքներով օժտված աստվածաբանին և մարդաբանին, փիլիսոփային և քաղաքագետին, ստեղծագործողին, բժշկին՝ Գրիգոր Նարեկացուն:

Համընդհանրացման դարաշրջանում անդրադառնալով մեծ աստվածաբանի մարդասիրական հայացքներին՝ հնարավորություն ենք ստանում նորովի մեկնելու հազարամյակների խաչմերուկներում հայտնված Մարդու

---

[1] Մարդ *բառը գրել ենք մեծատառով՝ նկատի ունենալով նրա հավաքական ամբողջությունը, որի միջոցով բացահայտվում է գոյի արժեքային ամբողջությունը:*

բանականի և զգայականի ներդաշնակ կեցության սահմանները: Հիմք ընդունելով նարեկացիագիտական նվաճումները՝ սույն հոդվածով ցանկանում ենք լրացնել այն՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով հավատի, հույսի և սիրո եռամիասնության գաղափարին՝ *որպես մարդասիրության ակունքի: Այս ծիրում եռամիասնության մեջ գտնվող նշված արժեքների զուգամիտումը կարևորում ենք՝ շեշտադրելով Գր. Նարեկացու Աղոթա-մատյանում յուրաքանչյուր մասի սկիզբն ավետող «Բան»-ով (Ի խորոց սրտի խօսք ընդ Աստուծոյ), որը ներառում է ժամանակի ու տարածության մեջ ճանաչողության բազմաշերտ մակարդակներ: Ամեն անգամ «Բանը» որպես իմացության եզր գործածվելով՝ ստեղծվում է ներդաշնակ կեցության ցանցային ճանաչողության համակարգ. հեղինակը ներկայացնում է հավատը, հույսը և սերը որպես մարդասիրության ակունք: Աստված իր արարչությամբ Մարդուն կյանքը ապրելու, ժամանակն ու տարածությունը հարափոփոխ զարգացման մեջ ընկալելու, ինչպես նաև աստվածաշնորհ գործողություններ կատարելու միջոցով նրան սեփական տեսակի անվտանգության ապահովման հնարավորություն է ընձեռում: Աստված իր ստեղծած աշխարհով բազում և բազմազան է, և Մարդը ի զորու չէ նրան ճանաչելու, սակայն, ընդարձակելով իր գիտակցության սահմանները, իմացության փափագով օժտված, դառնում է պարուրային (մանկություն, պատանեկություն, հասունություն) ժամանակի և տարածության մեջ տեղեկատվության ամբարման շտեմարան:*

Գր. Նարեկացին, անդրադառնալով Հին և Նոր կտակարանների կերպարներին, յուրաքանչյուրին դիտարկեց իբրև գոյաբանության մաքառման քառուղիներում կայացած, մարդասիրությամբ իմաստնացած դերակատարներ, որոնց ամբարած արժեքները, որպես տեղեկատվական համակարգ, փոխանցվում են սերունդներին: Նման մոտեցումը ոսպնյակվում է Հիսուս Քրիստոսի կերպարով, որի միջոցով մարդը հաղորդակցվում է երկնքի ու երկրի հետ: Եթե Հայր Աստված Մարդուն մեղքերից ազատելու համար իր Որդուն չզոհաբերեր, ապա Նրա արարչությունը ժամանակի և տարածության մեջ չէր ամբողջանա մարդասիրությամբ: Որդու միջոցով Տերը իր ստեղծած մահկանացու գոյին հիշեցրեց՝ ինքը չի մոռացել, որ Մարդը անկատար, մեղսունակ արարած է, սակայն Որդու խաչելությամբ և հարությամբ հնարավորություն է տրվում նրան հավատի, հույսի և սիրո տիրույթներում համակեցություն ապահովել՝ *հանուն մարդասիրության և սեփական տեսակի անվտանգության ապահովման գիտակցության:*

Մատյանում սիրո զգացումը հավասարաչափ է ի հայտ գալիս և՛ Արարչի, և՛ մարդկանց, և՛ իրականության ու բնության նկատմամբ: Այս ամենը հիմք ընդունելով՝ նշենք, որ Նարեկացու կենսասիրությունը ամբարում է Մարդու գոյաբանության փորձը, և մարդասիրական ակունքներով զուգամիտում երկնային և երկրային տեղեկատվական ներուժը:

Ստեղծագործողի՝ կենսասիրությամբ հագեցած մարդասիրությունը բազմաչափ է. նա սիրում է Արարչին, նրան, ով ստեղծել է իրեն և բնությունը, ինչպես նաև մարդուն, հանուն մարդասիրության հակված է համակեցության: Նարեկացին Մարդուն դիտարկում է որպես բնությունը ամբողջացնող գոյ և Տիրոջը երկրպագում նաև նրա համար, որ բնության

հանդեպ գիտակցական վերաբերմունքը միայն Մարդուն է շնորհվել: Տիրոջ սերը մարդ էակի հանդեպ անմնացորդ է, և այն Մարդուն մղում է համակեցության, կենսասիրության, որոնք էլ ներուժի անսպառ աղբյուր են: Բնության հանդեպ պաշտամունքի գերակայության անվերապահ ընդունումով՝ հեղինակը մարդուն ուղղորդում է դեպի հոգևորի աշխարհը՝ ցանկանալով շեղել նրան սոցիալական ծանր հոգսերից և օգնել գիտակցաբար վեր կանգնելու աններդաշնակ կեցությունից: Այս տիրույթներում էլ Նարեկացու բնապաշտությունը ի հայտ է գալիս երկու սկզբով՝ նյութական և ոգեղեն*: Գրողը փորձում է երկվության հաշտեցման եզրերը տեսնել Աստծու կողմից արարված ամենակատարյալ էակի՝ մարդու հոգում՝ հավատը, հույսը և սերը համարելով մարդասիրության ակունք՝ դրանով իսկ հայ Մարդու համար մշակելով համակեցության համակարգ, որը հնարավորություն է տվել դիմակայելու ժամանակի արհավիրքներին: Ինչպես գրում է Պ. Սևակը, այն, «…անցնելով մեր բոլոր սրբավայրերից, հասավ առաջիններից առաջինին՝ Օշականին…»[2]: Կամրջելով Մեսրոպ Մաշտոցի, Մովսես Խորենացու և իր պատմական ժամանակները՝ Գրիգոր Նարեկացին հայ ինքնության արդիականացման և ներդաշնակ աշխարհի կայացման առաքելությամբ ոչ միայն նոր մակարդակի բարձրացրեց մարդասիրությունը, այլև դարձրեց «Հոգևոր Հայաստանի» գաղափարախոսության արդիականացման գրավականը: Նման արժեքաբանությամբ էլ, որպես* «…նորարար և վիթխարի անհատականություն»[3]*, նա փորձեց պատասխանել իր քաղաքակրթական ժամանակի մարտահրավերին:*

Մատյանում Նարեկացին ողբում է Աստծո արարման խորհուրդը չհասկացող Մարդ արարածին, որը նրան ստեղծել է մեղկ, թույլ, անճար ու անկամ: Աստված-մարդ հարաբերություններում Նարեկացին, անվերապահ ընդունելով հանդերձ Աստծո մեծությունը, միաժամանակ հետևյալ մտայնությամբ է առաջնորդվում. մի՞թե Նա չգիտեր, որ այդքան թույլ ու անկամ էակ է ստեղծել, ինչպե՞ս իր Որդուն նրանց վստահեց: Քրիստոսի խաչելությամբ միայն մարդիկ հասկացան, որ իրենք թերի են, անկատար, ընչաքաղց, հաշվենկատ, դիմակավոր, երկերեսանի ու շողոքորթ…

Տերը մարդուն տանում է փորձության՝ իր միածին Որդուն ուղարկելով մարդկությանը փրկելու՝ միաժամանակ ապացուցելով, որ հարատև ժամանակի ու տարածության մեջ նա իր անկատարությամբ և ապակառուցողականությամբ չհանդգնի աստվածային արարչության դեմ ոտնձգություն կատարել: Լինելով հարուստ, հաջողակ, գիտելիքների տեր՝ Մարդն ինքնահաստատվում է որպես «ես», և եթե ջատագովն է հանդուրժողականության, բարության, մարդասիրության, ապա միայն այս պարագայում է նա դիմակայում Աստված դառնալու գայթակղությանը: Բարձրյալը մարդուն արարել է՝ նրան պարգևելով ապրելու իրավունք, որի խորհուրդը քննելով՝ հեղինակը ի հայտ է բերում ժամանակի և տարածության մեջ սոցիալական լողացող միավորի իր եռաչափ (ցանկական, բանական, ցասնական) *պատկերացումները: Այս տիրույթում էլ հեղինակը մի դեպքում ժամանակը*

---

[2] *Պ. Սևակ. Գրիգոր Նարեկացի.– Երկերի ժողովածու, 6 հատորով, հ. 6, Երևան, 1974, էջ 244:*

[3] *Տե՛ս նույն տեղում, էջ 245:*

դիտարկում է մարդու մանկության, հասունության, ծերության գոյաբանական պարույրում, այլ դեպքում՝ մարդ-բնություն-տիեզերք հարաբերությունների ընկալման, մեկնության և ճանաչման տարածական ծիրում: Հարաբերական անկախության մեջ համակարգաստեղծ այս ճանաչողության միջոցով էլ տիեզերքն իր մեջ ամբարած մարդը՝ տիեզերքի քաղաքացին, ճանաչողության երկակի եռաչափության մեջ իրեն իրավունք չի վերապահում, տարվելով նյութականությամբ, անտեսել գոյի և չգոյի փոխհարաբերությունների սահմանը:

Հանճարեղ մտածողի կարծիքով՝ աշխարհը պետք է ներդաշնակ լինի, քանի որ արարիչ Աստված բոլորին ստեղծել է սիրով, նրանց տեսակը կարևորել, և նրանցից յուրաքանչյուրն արարվել է որոշակի առաքելությամբ: Հենց այս հանգամանքն էլ ապահովում է տեսակների հոգնականությունը՝ շեշտելով նրանց պատասխանատվությունը աշխարհի ներդաշնակ գոյության հանդեպ (ԼԳ, Ը):

Այս համատեքստում էլ մարդասիրության հայեցակարգի քննությունն առավել ընդգրկուն դարձնելու նպատակով գրողն իր բազմահարուստ լեզվական միջոցներով շրջանառության է դրել «ինքն/ա/» դերանվամբ կազմված բառեր՝ առավել ակնառու դարձնելով «ես»-ի զարգացման ժամանակային պարույրը՝ անցյալ-ներկա-ապագա շղթայում այն ներկայացնելով որպես մարդու տեսակի կեցության կամ գոյաբանության հիմնախնդիր: Գր. Նարեկացին կարևորել է մարդու «ես»-ի ինքնամաքրման ունակությունները, քանի որ մարդը միայն այդ պարագայում կարող է արժևորել, գնահատել Արարչին: Այս ենթատեքստում էլ Գր. Նարեկացին կարևորել է մարդու (դիցուք՝ հայի) փոխակերպման հնարավորությունները, որոնցից չօգտվելու դեպքում տարածության մեջ բացահայտվում է տեսակների աններդաշնակ ընկալման հակասությունը: Հետևաբար, առաջնորդվելով հանդուրժողականության կարգախոսով, Գր. Նարեկացին մարդուն կոչ է անում ճանաչել իր նմաններին և հանդուրժող լինել նրանց՝ ինչպես չիմացության, այնպես էլ ապականուցողական գործողությունների հանդեպ: Ելակետ ընդունելով նշված տիրույթներում գոյը և չգոյը՝ նա յուրովի է ընկալում արարումը. Նարեկացու՝ աշխարհաքաղաքացի մարդու արժեհամակարգի կերտման փիլիսոփայական, մարդասիրական առանցքը ներառում է և՛ սոցիալական, և՛ ազգային տարածական բազմաչափությունը:

Տարածական այդ հարթություններում կատարած բազմաբնույթ գործողությունների օգնությամբ Գր. Նարեկացին մարդ-մարդ հարաբերություններում ուրույն կառուցակարգ է մշակում՝ ինքնամաքրվել ինչպես երկխոսության, այնպես էլ բանավեճի միջոցով: Գր. Նարեկացու համոզմամբ՝ ախտից ազատվելու միայն մեկ ճանապարհ կա. մարդը երկխոսության միջոցով պետք է համոզվի, որ նյութը հոգուն բավարարել չի կարող, և գործողություններ կատարելիս տարածությունը և ժամանակը լցնի ինքնահամագործակցության, ինքնահիրացման գործոններով: Այս միջոցով էլ Գր. Նարեկացին բժշկել և բժշկում է նրա հոգին, մաքրում ախտերից՝ նկատի առնելով մարդու՝ չորս տարրերից կազմված էությունը: Լինելով անտիկ փիլիսոփայության չորս տարրերի մասին տեսության հետևորդը՝ Նարեկացին ԻԶ բանում «Բազմահատուած էութիւն բնութեանս, ներհակք

միմեանց ի պատերազմի» տողով նկատի է ունեցել մարդկային էությունը՝ կազմված չորս սկզբնական տարրերից՝ հուր, օդ (երկնային), ջուր, հող (երկրային): Այս հանգամանքն էլ Տիրոջ հետ հարափոփոխ հաղորդակցման օգնությամբ «ես»-ը նորոգելու և շրջապատը երկխոսության և բանավեճի միջոցով նորովի ընկալելու հնարավորություն է տալիս մարդուն: Գր. Նարեկացու ճանաչողության հայեցակարգն իր հարափոփոխ հաղորդակցմամբ տարածական բազմաչափության մեջ համադրում է ես, նա, մենք *դերակատարներին:*

Բարձրյալը, Ամենակարողը արարիչ է, նա է ստեղծել մարդուն՝ նրան պարգևելով որոշակի ժամանակի և տարածության մեջ ապրելու հնարավորություն՝ ցանկանալով փորձության ենթարկել նրան իր ինքնահաստատման գործընթացում, որն է՝ չար-բարի, լավ-վատ, արարիչ-ավերիչ*: Հեղինակը, դարերի կտրվածքով քննելով մարդուն, միաժամանակ ի հայտ է բերում նաև իր պատկերացումները ժամանակի և տարածության մասին: Նրա ընկալումներում ժամանակը եռաչափ է՝* անցյալ-ներկա-ապագա. *մի դեպքում նա անդրադառնում է նրա մանկության, պատանեկության, հասունության շրջաններին, այլ դեպքում՝ մարդ-տիեզերք հարաբերություններին (մարդը ինչպես է ընկալում և ճանաչում տիեզերքը, նրա անցյալը, ներկան և ապագան): Աղոթամատյանում (Ժ, Բ մինչև ԺԴ, Ա) անընդմեջ ներկա են Հին ու Նոր կտակարաններից կատարված մեջբերումները («Քո հավատը միայն քեզ փրկեց», իսկապես, եթե մանանեխի մի փոքրիկ, աննշան սերմնահատիկի չափ հավատն… (Ժ, Բ), Ուսած Պողոսից, Դավիթից խրատված, «Հավատո՞ւմ եք, որ Ես կարող եմ ձեր աչքերը բանալ», …կանայք … Հավատով ընկան ոտքերն արարչի, Անհապաղ տեսան Աստծո փառքի հանդեսն անապատում՝ Իրենց սիրելի եղբոր հարության, Ենոքը, ապա Ահարոնը, հետո Դավիթը, Պետրոսն ու փոքր Եղիազարը, Պողոսն ընտրագույն, Որ մի ժամանակ պարագլուխն էր անիրավների, Այլ չարչարալի մարմնով զորապես Հաղթելով մահվան՝ վերացավ երկինք (ԺԱ-Բ), իսկ գագաթնակետը բան ԺԴ-Բ-ն է: Կտակարանների կերպարների շուրջ նարեկացիական խորհրդածությունների հիմքում հեղինակի հետևյալ եզրահանգումն է, որ ԷՈՒԹԵՆԱԲԱՆԱԿԱՆ արժեք ունի Մատյանում.*

Այլ եւ ոչ բանիւ յանդիմանեցեր:
Ոչ ոտն հարեր անկելոյն,
Այլ կարեկցաբար մատուցեալ՝
Զծայրագոյնն ցուցեր զինամս (ԺԴ, Գ):

Այս մոտեցմամբ էլ Նարեկացին կարծում է, որ հավատի, հույսի և սիրո սկզբունքները չպահպանող մարդու հոգին է միայն նավաբեկության ենթարկվում, քանի որ տուրք է տալիս զգայական ընկալումներին:

Մարդը Աստծուն հավատալով վեհանում է և, մարդասիրությամբ առաջնորդվելով, ինքնիրեն հնարավորություն է տալիս երկխոսություն ծավալել առաջին հերթին Աստծո, ապա իր նմանների հետ, որոնց ներդաշնակվելով՝ վերածվում է աստվածային մարդասիրության կրողի: Միայն այս դեպքում է հնարավոր ես-նա-մենք *հենքով արժեքային համակարգի*

ընդունմամբ մարդասիրություն դավանել ոչ թե ձևականորեն, այլ բանականորեն: Աստված մարդասիրության ակունքն է, ուստի հավատի, հույսի և սիրո տարաբնույթ դրսևորումներով Մարդը պարտավոր է լինել արարչապաշտ, մարդասեր, բնապաշտ և մտահոգվել իր անվտանգ, արժանապատիվ, ներդաշնակ կեցության համար:

Այս մտայնությամբ էլ Նարեկացու աշխարհաճանաչողության համակարգի մեջ ուրույն տեղ ունի խղճի գործոնը. Մարդու «ես»-ը կայացած է, եթե նա հաշվետու է իր խղճի առջև, քանի որ Բարձրյալի արարման խորհուրդն իր բնույթի մեջ առանձնահատուկ, անկրկնելի և ընդունելի է միայն այն պարագայում, երբ նա գութ ունի, կարողանում է խղճի մտոք որոշումներ կայացնել՝ հանուն իր նմանների գոյաբանության և նրանց հետ համակեցության: Հենց այս նկատառումներով էլ Քրիստոս իր կերպարով մարդուն հնարավորություն է ընձեռում, որ ժամանակի և տարածության մեջ կերպափոխվի՝ կառուցելով իր «հավատի շենքը» և մեծագույն ներողամտություն է ցուցաբերում Մարդու թուլությունների հանդեպ:

Մարդասիրությամբ է ներծծված քրիստոնեական կրոնի էությունը, որը հնարավորություն է տալիս մարդուն ոչ միայն ինքնահաստատվելու, այլև ինքնադրսևորվելու, այսինքն՝ հավատալով Քրիստոսին՝ Մարդը ինքնահիրացվում է որպես քրիստոնյա՝ դառնալով Տիրոջ արարած արժեքների կրողը՝ պատրաստ պայքարելու իր դավանանքի համար և կրելու ցանկացած պատիժ:

Քրիստոնեական մարդասիրությունը, որպես նարեկյան քաղաքակրթական ժամանակի «ես»-երը բնութագրող հարաբերական անկախության մեջ գտնվող ամբողջություն, ուղեցույց է Մարդու ներքին և արտաքին կերպարի միասնական ընկալման համար: Ժամանակային հարացույցը իբրև ելակետ օգտագործելիս բացահայտվում է սկզբի, վերջի և հայտնության, *ինչպես նաև մաքրագործման* (*կատարսիս*) *փուլայնությունը՝ այն կենսագործունեության տիրույթը, որտեղ «ես»-ը ժամանակի ընթացքում պահպանում է իր տեղը՝ երկխոսություն վարելով հանուն մարդասիրության և համակեցության: Քրիստոնեական մարդասիրությունը համապատասխան վարքագիծ ու վերաբերմունք է ենթադրում, որտեղ ժամանակն անվերջ է մարդասիրության համար, իսկ ներքին և արտաքին «ես»-ի ինքնակատարելագործումը՝ հարափոփոխ: Գոյություն ունի մի բարձրագույն՝ վերիմացական վիճակ՝* մաքրագործում, *երբ սկիզբ և ավարտ չենթադրող, գարնան անծայրածիր, հորդառատ ու ալեկոծ գետերի նման Մարդը գալիս է անվերջությունից, շարժվում դեպի անվերջություն, իր կուտակած ներուժով լցվում օվկիանոս՝ հանրային տարածք, և փոխակերպվում:*

Ժամանակի տիեզերաբանությունը՝ հասարակական, անհատական և ազգային դրսևորումներով, «ես»-ը դիտարկում է «հանգույց-ցանց» փոխհարաբերություններում. «ես»-ը և՛ հանգույց է, և՛ ցանց, *որոնց օգնությամբ նա ոչ միայն արժեք է փոխանցում, այլև ստանում և կուտակում՝որպես տեղեկատվական համակարգ: Նարեկյան մշակույթի տեսանկյունից «ես»-ի ներքին և արտաքին մարդու շաղկապվածությունը իրականություն է՝ հարաբերականորեն միասնության և բաժանելիության մեջ,*

իսկ «ես»-ի անհատական էության հիմքը նրա հավատն է առ Աստված, Մարդ, բնություն՝ իր բազմաչափ դրսևորումներով:

Ե՛վ ցանցերը, և՛ հանգույցները հնարավորություն են տալիս «ես»-ին՝ ներքին և արտաքին մարդուն, արժևորելով իր հարատև փոփոխության գործընթացը, գիտակցորեն խուսափել «գորդյան հանգույց»-ի ճակատագրից: Այս ամենն ազդեցություն է թողնում «ես»-ի հակամարտության ընկալման վրա, որը նարեկյան մշակույթում դիտվում է որպես «ես»-երից կազմված և «մենք»-ի ներսում ձևավորված ապակառուցողական երևույթ: Նման «մենք»-ը, կորցնելով ներդաշնակ և անվտանգ կեցության կարգավիճակի գերակայության անհրաժեշտությունը, արտաքին աշխարհի ազդեցությամբ տրոհվում է զգայականի և բանականի բևեռներում (նկատի ունենք հայ ինքնությունը ջլատող երևույթները՝ պայմանավորված թոնդրակյան շարժմամբ):

Նարեկացու համոզմամբ՝ հավատը, հույսը և սերը, որպես մարդասիրության ակունք, Մարդուն ձերբազատում են իրականությունը տրոհված ընկալելու հնարավորությունից՝ չսահմանափակելով նրան ո՛չ հասարակական, ո՛չ էլ անհատական ժամանակի միարժեք ընդունումից: Այս պարագայում էլ սերը իր բազմաչափությամբ (առ Աստված, բնություն, Մարդ, կենդանական, բուսական աշխարհ) բևեռացնում է մարդու պատասխանատվությունը կատարած արարքների, արտահայտած մտքերի, զգացմունքային ապակառուցողականության նկատմամբ:

Վերոբերյալը նարեկյան մարդասիրության հիմքն է, որտեղ գործողության բարոյական արժեքաբանությունը իր վարքագծի բաղկացուցիչ է դարձնում միայն հավատի, հույսի և սիրո տիրույթներում ձևավորված անհատին: Նարեկացին բացահայտել է մարդասիրության բազմաչափությունը Մարդու կամքի, պատասխանատվության, ինչպես և հարահոս փոփոխվող հակամարտությունների առումներով: Կյանքի պարույրը, իբրև կամք, պատասխանատվություն և հակամարտություն, շարունակական փոխկապված երևույթների ամբողջություն է, որը կերպափոխվում է ժամանակի մեջ՝ «երբեմն ջրվեժելով», երբեմն լեռն ի վեր մագլցելով», «անդունդը գահավիժելով ճյուղավորված գետաբազուկներով», նպաստում «ես»-ի հզորացմանը հավատի, հույսի և սիրո միջոցով: Ջուրը փոխաբերական իմաստով հնարավորություն է ընձեռում Գր. Նարեկացուն Քրիստոսին դիտարկելու որպես բանական և զգայական ակունքների խաչմերուկում շիթով ժայթքած ջրվեժ, որն իր ուժով, զորությամբ դառնում է բարոյականությունն ու մարդասիրությունը սնուցող ակունք:

Ինքնամաքրվելով Մարդը փնտրում է այն ոսկե միջինը, որի օգնությամբ ներդաշնակում է նյութականը և ոգեղենը. այս դեգերումների հիմնաքարը հավատքն է, հավատալ ոչ թե վախենալով, այլ ակնածելով, հուսալով և սիրելով: Քրիստոնեական արժեքները ամբարում են զգայական այն մեծ պաշարը, որը Մարդուն պետք է ուղեկցի կյանք կոչվող ժամանակի ընթացքում, և եթե նա դույզն-ինչ թերահավատ լինի, ապա վախից կամ չիմացությունից ծնված կուռքերը նրան կզրկեն Աստծո ողորմածությունից՝ նետելով չարի իշխանության տակ: Հավատալ Աստծուն նշանակում է սիրել Տիրոջ արարած աշխարհը ամբողջության մեջ՝ սիրել Աստծու

Որդուն, իսկ սերը Տիրոջ և Որդու հանդեպ մահկանացու մարդուն զերծ է պահում չարից, ապակառուցողական ներուժից, տրոհվածությունից և չարդարացված նկրտումներից: Ժամանակի պարույրում կոփված հավատը մարդուն ապացուցում է, որ միայն սերն է մարդուն օժտում համբերության և համակեցության զգացումով: Հավատալ սիրելով, քանի որ մարդը միայն այդպես կարող է մաքրվել մեղքերից: Հավատալ սիրելով, քանի որ այդ զգացմունքը նրան հնարավորություն կտա ներդաշնակել նյութը և ոգին, փորձել ստեղծել երկրում Աստծո նման՝ ոչ միայն իր, այլև հանուրի համար: Սա հնարավոր է մեկ պարագայում. երբ մարդը հավատում է սիրելով, և հենց այդ զգացմունքն էլ հնարավորություն է տալիս մարդասիրական արարքների և, բարձրացնելով իր բարոյական նկարագիրը, վայելել Աստծո բարեհաճությունը:

Ավետարանում Քրիստոսի հավատի մասին ասվում է. «Ճշմարիտ ասում եմ ձեզ, թե որ այս սարին էլ ասենք՝ վեր կաց և ընկիր ծովը, կլինի: Եվ ամենը, ինչ որ աղոթքի մեջ, խնդրեք հավատքով, կառնեք» (Մատթ. ԻԱ, 21):

Աստված, սիրելով մարդուն, նոր ուխտ է կնքում նրա հետ՝ զոհաբերելով Որդուն: Նա գիտե, որ Մարդը չար է, դաժան և դավաճան: Բարձրյալը ճանաչում է Մարդուն, ուստի ցանկանում է բժշկել նրան (ԽԴ, Ա):

Հավատալ սիրելով *հայեցակարգը առաջին հերթին նշանակում է մարդուն բանական հավատի հնարավորություն տալ՝ հանուն մարդասիրության գիտակցված գործողությունների դիմելու: Մարդասիրությունը աստվածային լույսի աղբյուր է և իբրև ներդաշնակ կեցության գրավական՝ ուղղորդել է Նարեկացուն ողջ կյանքի ընթացքում: Ասվածը փաստենք՝ վկայակոչելով նրա անձի մասին պահպանված բանահյուսական[4] բազմաթիվ ավանդույթները, որոնց մեջ ներկայացված են նրա՝ ինչպես կրոնական, այնպես էլ աշխարհիկ կյանքի ճանաչողությունը, և այս համադրումն էլ առանցքային է նարեկյան մշակույթի հիմքը կազմող մարդասիրության մեջ: Այս ամենը իր ամբողջական դրսևորմամբ է ներկայանում Մատյանի Լ.Գ-Զ բանում:*

Ակնհայտ է, որ Նարեկացու հայեցակետով սերը, իբրև կյանքի աղբյուր, հնարավորություն է ընձեռում Մարդուն սիրո լույսի և հույսի ներքո ապրել՝ տիեզերական ներուժը ընդունելով և ճանաչելով: Այսինքն՝ այնպես, ինչպես տասը դար անց իր «Սիրելու արվեստը» գրքում ձևակերպել է Էրիխ Ֆրոմը (1900–1980). «Սերն այնպիսի արվեստ է, ինչպիսին ապրելն է»[5]:

Նարեկացին, որպես նորպլատոնական և հատկապես հայ նորպլատոնական դպրոցի (Մովսես Խորենացի, Դավիթ Անհաղթ) ներկայացուցիչ, այն

---

[4] *Այդ մասին տե՛ս Գ. Հ ո վ ս ե փ յ ա ն. Փշրանքներ, Թիֆլիս, 1892, Ա. Չ ո պ ա ն յ ա ն. Դեմքեր, Փարիզ, 1924, Ա. Ղ ա ն ա լ ա ն յ ա ն. Ավանդապատում, Երևան, 1969: Նարեկացու մասին ժողովրդական ավանդություններ ու զրույցներ պարունակող ամենահարուստ ձեռագիր ժողովածուն՝ «Վարք և պատմութիւն սրբոյն Գրիգոր Նարեկացւոյն» խորագրով, պահվում է Մատենադարանում՝ 9861 թվահամարի տակ, պարունակում է 17 ուշագրավ պատմություններ և զրույցներ:*

[5] *Է. Ֆ ր ո մ. Սիրելու արվեստը, թարգմ. և առաջաբանը՝ Մ. Մարգարյան, Երևան, 1996, էջ 16:*

արդիականացրել է և յուրովի սինթեզելով հունա-հռոմեական և քրիստոնեական իմաստասիրությունը՝ մարդասիրական հիմքի վրա ստեղծել մի այնպիսի մշակույթ, որն էլ հային օգնել և օգնում է դիմակայելու և՛ իր, և՛ ապագա ժամանակների մարտահրավերներին: Իր բարենորոգչական բնույթով նարեկյան մշակույթը կրոնական և աշխարհիկ հակադրություններ չի ենթադրում. այն մարդկանց հաղորդակից է դարձնում իր աշխարհատեսությանը, որտեղ իշխում է ոչ թե նյութը, այլ ոգին: Նյութն անցողիկ է, ոգին՝ հավերժ, նյութական սին աշխարհը չարություն է ամփոփում, իսկ ինքը ոգեղեն արժեքներով է առաջնորդվում:

Աստվածաբան Մ. Անանիկյանը, անդրադառնալով այս հարցի մեկնությանը, գրում է. «…Գ. Նարեկացին շատ ավելի մոտ է գտնվում բողոքական ըմբռնմանը, թե Ս. գիրքն է միայն վստահելի աղբյուրը քրիստոնեական վարդապետության և թե լուսավորված և ողջամիտ անհատը իրավունք ունի այն մեկնաբանելու»[6]: Նարեկացին եկեղեցուն աստվածային սկիզբը վերադարձնելու մտահոգությամբ փորձում է եկեղեցական այրերին ետ պահել շահասիրությունից և նյութապաշտությունից՝ ծառայելով հավատի, հույսի և սիրո եռամիասնությանը:

Հալածանքներից խուսափելու նպատակով Նարեկացին մեծ աշխարհը ամբողջացնելու նկատառումներով երբեմն ասելիքը շարակարգում է «ծածուկ խորհուրդների□ միջոցով, իսկ այդ գաղտնի խորհուրդներում համակարգված է իր պատկերացրած աշխարհը, որի նկարագիրը Աստծու հետ երկխոսության միջոցով է ներկայացնում հետևյալ մտայնությամբ. եթե Աստված Քրիստոսին ուղարկեց մարդկանց մեղքերը իր վրա վերցնելու, ապա ինքը ինչպես կարող է Արարչին իր »ծածուկ խորհուրդները□ չվստահել:

Սա վեհացնում է հեղինակին, որն էլ մարդասիրությունը բարձրացնելով բանական կարգավիճակի՝ հնարավորություն է տալիս Մարդուն հավատի, հույսի և սիրո միջոցով Աստծո հետ հաղորդակցվել: Նարեկացին, որպես սիրո աշխարհակարգի հիմնադիր, հուշում է աշխարհիկ և հոգևոր իշխաններին ինչպես հաղթահարել հոգևոր անկատարելությունը և ընչաքաղցությունը: Միայն մարդասիրական իշխանություն ունենալու ցանկությամբ է հնարավոր քրիստոնեական կարգը պահպանել, քանի որ.

ա) Քրիստոսի կերպարը, որպես կանթեղ կարող է լուսավորել ցանկացած մարդու՝ նրան փրկելով բազմաչափ աշխարհը միայն նյութի հարթության վրա ընկալելու վտանգից՝ «միայն հացի» կարգախոսից:

բ) Մարդու կողմից համակեցության կանոնները սեփական «ես»-ի ճանաչողության երևույթների միջև եղած կապը տեսնելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ նարեկյան մշակույթը մարդուն հնարավորություն է տալիս այլ «ես»-երի հետ համագործակցելու միջոցով ինքնահաստատվել և ինքնահրացվել որպես տեսակ: Այս պատճառով էլ կարծում ենք, որ նարեկյան մշակույթը, ժխտելով սոցիալական կառուցակարգին ենթարկվելու նյութապաշտ հակումները, մարդասիրությունը լիցքավորում է երկխոսությամբ և համագործակցությամբ: Դրանով իսկ նա հայ

---

[6] *Մ. Ա ն ա ն ի կ յ ա ն. Նարեկացին և Նարեկը, քննական ուսումնասիրություններ, Նյու Յորք, 1932, էջ 137:*

մարդու գոյության եզրեր է մշակում՝ նրան մղելով համակեցության, ինքնաճանաչման, հանդուրժողականության, այլախոհության:

Ակնհայտ է, որ հավատը Մարդուն ներդաշնակում է բնությանը, որն էլ նրան հնարավորություն է տալիս Աստծո կողմից իրեն շնորհված կյանք կոչվող առեղծվածի ժամանակին ու տարածությանը բանականորեն վերաբերվել՝ ինքնահաստատվելով և ինքնահրացվելով որպես արարող էակ: Կյանքի բանական խաղը որպես արարում ընկալելով էլ Մարդը գիտակցաբար վեհացնում է իրեն և ներդաշնակվում իր նմաններին ու բնությանը: Նարեկացին մեծարում է մարդուն՝ վստահ, որ «ես»-ը ինքնահաստատվում է, երբ խորապես կարևորում է իր հավատի բանական սկիզբը.

Եւ կամ զոր շահ սաղմոսն ունիցի,

Եթէ ոչ ի միտ առնուցում (ԿԲ, Ա):

«Շրմբռնել սաղմոսի իմաստը» նշանակում է մեխանիկորեն հավատալ Քրիստոսին՝ չբացահայտելով կյանքի խաղի էությունը, մինչդեռ բանական հավատը իմաստություն է շնորհում մարդուն:

Նարեկացու համար գոյություն չունի «անմեղանչական» որևէ հեղինակություն. որպես բանական և զգայական էակ՝ Մարդն ունի բազում թերություններ, որոնք կա՛մ հաղթահարվում են, կա՛մ կերպափոխվում, իսկ հաճախ էլ ժամանակի և տարածության մեջ նորերն են ձեռքբերվում:

Բանականը և զգայականը արժևորվում են իրավիճակով. երբ Հիսուսը Գողգոթա էր բարձրանում, մեկը փորձում էր[7] ուսով խաչը բարձրացնել, մյուսը փարչով ջուր էր մեկնում, մեկն էլ թքում էր, քրքջում: Նրանցից յուրաքանչյուրը իրենց հավատի չափով բանականի և զգայականի տիրույթներում կառավարում էր իր վարքը՝ ցանկանալով կյանքի խաղից շահած դուրս գալ: Անցնելով ինքնահաստատման բազմապիսի խութերով՝ Մարդը փորձության է ենթարկվում, որից նա դուրս է գալիս ոչ թե ամբարտավանության, դավի, չարության, այլ ակնածանքի, հույսի, սիրո և պատկառանքի միջոցով:

Նարեկացին Մարդուն մեկնել է պատմական հոլովույթում կուտակված վարքի կառավարման փորձով, որն էլ հնարավորություն է տվել Աստծո-մարդու-բնության ներդաշնակության անհրաժեշտությունը կարևորել բանականի և զգայականի փոխհարաբերություններում: Քրիստոսի նկատմամբ հավատը դրված է այն մարդասիրության հիմքում, որը հնարավորություն է տվել հեղինակին բացահայտելու և տարբերակելու Մարդու վարքի բանական և զգայական սկիզբը:

Զգայականը իր եսակենտրոնությամբ Մարդուն շեղում է իրականությունից և իրեն գնահատելու հնարավորությունից. նա գերագնահատում է իրեն՝ ներողամտություն և հանդուրժողականություն չցուցաբերելով իր նմանի նկատմամբ, խախտում երկխոսություն ենթադրող համակեցությունը

---

[7] *Ըստ Մաթեոս ավետարանչի՝ Գողգոթայի ճանապարհին Սիմոն Կյուրենացին վերցրել է խաչափայտը և տարել խաչելության վայրը (ԲԷ, 32), ըստ Հովհաննես ավետարանչի՝ Հիսուսն ինքն է իր խաչափայտը Գողգոթա տարել): Ավետարանական ավանդության համաձայն՝ մատնության գիշերը Հիսուսին ապտակում է քահանայապետի սպասավորներից մեկը (ԺԸ, 22): Որոշ մեկնիչներ կարծում են, որ ապտակողը եղել է 38-ամյա անդամալույծ այն երիտասարդը, որին Տերը հրաշագործությամբ բուժել է:*

և իր կենսաբանական գոյատևման ընթացքում կյանքի խաղը ընկալում որպես բոլորի դեմ ուղղված պատերազմ:

Նարեկացու հավատը բանականի և զգայականի փոխհարաբերությունների ամբողջություն է: Նմանօրինակ մոտեցմամբ էլ նա շեղվում է ժամանակի գերիշխող եկեղեցական նորմերից և դառնում բարեփոխման ջատագով. թերևս այս պատճառով էլ մեղադրվում է թոնդրակյան շարժմանը հարելու մեջ: Մարդու և Աստծո հանդիպման վայրը հավատի տաճարն է, ուր և մարդը, կենտրոնացնելով իր կենսական ներուժը, Տիրոջ հետ երկխոսության միջոցով դիմակայում է կյանքի խաղին՝ հնարավորություն ստանալով արարել կյանք, ոգի, խիղճ, ճշմարտություն՝ որպես բանականի և զգայականի հավատո հանգանակ:

«Լուսավոր շնորհների» օգնությամբ իր մեջ բանականն ու զգայականը ամբարած Մարդը հավատում է արարման ճշմարտացիությանը, քանի որ ապրում է Աստծո արարած աշխարհում: Համաձայն Նարեկացու՝ Մարդը, ընդունելով աշխարհաստեղծ կացության ճշմարտությունը, հավատարիմ է դրան, սակայն երբեմն էլ տարվում է կյանքի գնահատման ու արժևորման խաբուսիկ, իրեն հոգեպես կործանող արժեքներով: Թերահավատությունը Մարդուն զրկում է աստվածաստեղծ արժեքների գերակայությունը ընդունելուց և որպես գոյ այնպես ինքնադրսևորվելուց, ինքնակառավարվելուց, ինչ նպատակով Աստված իրեն արարել է. չէ՞ որ մարդը Աստծո ստեղծածներից միակն է, որին տրված է արժևորելու և վերարժևորելու շնորհ: Նարեկացին ողբում է այն Մարդուն, որը որպես բանական էակ թերահավատ է, չի գիտակցում և արժևորում իր կյանքի ժամանակի խորհուրդը:

Նյութապաշտությունն ու թերահավատությունը խանգարում են Մարդուն գիտակցելու հավատի կարևորությունը, մինչդեռ դրանով է Մարդը տարբերվում կենդանուց, զսպում և ետ պահում իրեն նյութապաշտ չարագործություններից: Աստծո արարած առաջին մարդիկ ևս հավատ չընծայեցին Բարձրյալի պատվիրաններին. օձը գայթակղեց Եվային, Տերը վռնդեց նրանց դրախտից և փորձության տարավ իրենց չար արարքի պատճառով: Չարությունը, ըստ միջնադարյան ձևակերպման, ունի իր «դուստրերը».

«Հպարտութիւն և դստերքն իւր. *յանդգնութիւն, լրբութիւն, անմիաբանութիւն, յաւելհոգութիւն, անհնազանդութիւն, պարծիլն, կեղծաւորութիւն:*

Նախանձ և դստերքն իւր. *բարկութիւն, չարախօսութիւն, ծածկել զբարին, անհոգութիւն, յառաջելն ի չարն, ատելութիւն, բամբասանք:*

Բարկութիւն և դստերքն իւր. *չարախօսելն, փքանքն, պարսաւանքն, հայհոյել զաստուած, որոշել ի սիրելեացն, կռիւն համարձակ, անժուժկալութիւն:*

Ծուլութիւնն և դստերքն իւր. *մեղկութիւն, տրտմութիւն, անզգուշութիւն, անյուսութիւն, հեղգութիւն, ձանձրութիւն, անփութութիւն:*

Ագահութիւն և դստերքն իւր. *սուտ ասելն, սիմօնականութիւնն, խաբեութիւն, սուտ երդնուլն, վաշխն տոկոսին, աւազակիլն, գողութիւն:*

Որկրամոլութիւն և դստերքն իւր. *յոլով ուտելն, հոգայ վասն կերակրոյ, անխտիր յափշտակելն, բազում անգամ ուտելն, ոչ հաւանիլ մի ազգ կերակրոյ, արբեցութիւն, փափկութիւն:*

Բոլշախոհութիւն և դստերքն իւր. *դող և շարժիլն մարմնոյ, յարատ և անպատշաճ հայելն, յանդգնիլն, աղտեղի զրուցելն, խոնճ առնելն ընդ միմեանս, խնդիրք չարք, հեշտանալն ի մեղս, աղտեղանալն ի շաղախիլն, կուրութիւն մտացն, անխոկումն լինելն, սէրն ու կամքն իւր, ցանկութիւն աշխարհիս, անյուսութիւն հանդերձեալ կենացն, փոփոխումն մտաց, ընկեցիկ լինելն ի մեղս»*[8]*:*

Նարեկացու համոզմամբ՝ վերը նշված ոչ աստվածահաճո հատկանիշների քոդարկմամբ էլ Մարդը, իր բազմաբնույթ պահանջմունքների բավարարման հաճույքից գայթակղված, արդարացնում է չարիք և ողբերգություն ծնող իր արարքները, այսինքն՝ «ճշմարտություն է խաղում», «արդարությունը՝ կեղծում»: Հեղինակի կարծիքով՝ գայթակղությունները Աստծո փորձություններն են, «մանավանդ, որ որոգայթը գաղտնի է, և այն լարողն աներևույթ»: Բարձրյալը մարդուն գայթակղության միջոցով է փորձության տանում», և նա էլ ծուղակն է ընկնում և հրապուրված իր թվացյալ հաջողություններով՝ չի ապաշխարում:

Ապաշխարությունը Քրիստոսի կողմից սահմանված յոթ սուրբ խորհուրդներից է (Մկրտություն դրոշմ (կնունք), հաղորդություն…): Այդ մասին ասվում է Սուրբ գրքում (Հռովմ. Բ, 4, Ղուկ., ԺԸ 9-14 և այլն): Բարձրյալը Մարդու գործած մեղքերը մաքրելու համար սահմանել է ապաշխարության խորհուրդ, որի իմաստը հետևյալն է. մարդը, իր գործած հանցանքներն ու մեղքերը գիտակցելով, ծնրադիր արտասուքով, խնդրանք-աղաչանքներով ու մեղա՛ներով, աղոթքով, գործած հանցավորությունները անկեղծ ու մաքուր սրտով խոստովանելով, զղջում է իր արարքները և Բարձրյալից ներում աղերսում: Նման դեպքում նա ներում է ստանում, «դառնում անմեղ և լուսավոր, ինչպես մկրտությունից հետո»[9]*: Նա ապաշխարում է եկեղեցում, որովհետև «Եկեղեցին Քրիստոսի մարմինն է» (Եփսես. Ա, 22): Չմոռանանք, որ Տերը գիտակցաբար և ի սրտե ապաշխարելու դեպքում է ներում: «Մատյանի» վկայությամբ՝ նա չի ներել Աքար Զամրեանին, Սաւուղ Կիսեանին և Յուդա Սիմոնեանին (ԻԷ, 50):*

Մարդն ինչքան ապրում է, այնքան էլ մեղանչում է և ներքին պահանջ զգում ապաշխարելու: Ժամանակի և պատմության հարահոս քառուղիներում, քանի գոյություն ունի մարդկությունը, այնքան էլ նրա մեղանչականությունը: Իսկ մարդը անընդհատ ապաշխարում է՝ ուղեցույց ունենալով Տիրոջ պատվիրանը. «ինչ որ թողնենք երկրի վրա, թողնված կլինի երկնքում» (Մատթ. ԺԸ, 18):

Հենց այս հանգամանքն էլ Նարեկացուն հիմք է տալիս մարդուն այնպիսի անսասան հավատի մղելու, որը զերծ կպահի անորոշության մեջ հայտնված Մարդուն ինչպես մասնատվելուց, այնպես էլ իրականության հատվածային ընկալումից: Նմանօրինակ հատկանիշների տեր մարդուն էլ Աստված հնարավորություն չի տալիս իր ներուժը վերարժևորել և ըստ այդմ էլ արժևորել իր «ես»-ը, որի կայացումը բանականի և զգայականի ներդաշնակությունն է:

---

[8] *Հ. Քենդերյան. Հովհաննես Մայրագոմեցի, Երևան, 1973, էջ 76, 77:*

[9] Энциклопедический словарь Ф. А. Брокгауза, И. А. Ефрона, т. XXIV, СПб., 1898, с. 240.

Աղոթամատյանում գեղարվեստական խոսքի բացառիկ ուժով Նարեկացին նկարագրում է մարդու ներքին «ես»-ը, մերկացնում նրա «բոլոր սատանայական գաղտնածածուկ որոգայթները» և մարդու անթիվ ու անհամար մեղքերի շարքը ցուցադրում:

«Թող» վերաբերականի անվերջ կրկնությամբ Նարեկացին Մարդու համար ինքնամաքրման տեղեկատվական մրրկաձև փոփոխվող կառուցակարգ է ստեղծում, որի օգնությամբ էլ նա գործած սխալների անընդմեջ կրկնվող խոստովանությամբ կերտում է իր հավատքի տաճարը:

Այս համատեքստում Նարեկացին առանձին քննության նյութ է դարձրել Մարդու գայթակղության հետևյալ մակարդակները՝ Մարդ, որն արդեն գայթակղվել է, Մարդ, որը թերահավատության եզրին է, և Մարդ, որը վստահ է՝ ինքը երկրի վրա «աստված է», իսկ Աստված երկնքում է և իրեն չի տեսնում ...

Սակայն Մարդը, խուսափելով ինքնախոստովանքից, կրկին հայտնվում է գայթակղության թակարդում և իրավիճակային-թվացյալ գործողություններ կատարելու պատճառով իրեն զրկում իրականությունը բազմաչափ տեսնելու և ճանաչելու հնարավորություններից: Մեր համոզմամբ՝ Նարեկացին իր ժամանակի և հայ իրականության մեջ առաջինն էր, որ, քննելով մարդու ինքնադրսևորման վարքաբանական բազմաչափությունը, անդրադառնում է նրա օտարվածության հիմնախնդրին: Նման մտայնությամբ էլ Գր. Նարեկացին փաստում է.

Ես՝ տառապեալս ամենաթշուառ,

Ի վերջին սպասաւորութեան մաղթանաց այսր մատենի...(ԾԷ,Գ):

Վստահ իր մոտեցումների համամարդկային էությանը՝ գրողը ինքն արդեն իսկ արժևորում է իր ստեղծած Մատյանի համամարդկային բնույթը: Գր. Նարեկացին, գործածելով «իչ»-ով կազմված բառեր, վեհացնում է Տիրոջը՝ նրա ուշադրությունը հրավիրելով նյութապաշտության և անհանդուրժողականության երևույթների արդյունքում առաջացած «ես»-ի տրոհվածության վրա(ՁԲ, Բ):

Այս մտորումներում էլ Նարեկացին արարում է աղոթողի կերպարը. աղոթքի զորությամբ վերակազմավորելով ժամանակի պարույրը՝ Մարդը հնարավորություն է ստանում արժեքավորել իր հավատը՝ որպես իր անվտանգ գոյության և կեցության գրավական: Միայն քավությունն է, որ հնարավորություն է տալիս Մարդուն հետևել Քրիստոսի պատգամներին, որը նրան օժտում է աստվածային զորությամբ, ուժ ու եռանդ պարգևում: Ինքնամաքրմամբ կատարելության հասած նարեկյան մարդն էլ՝ օժտված աստվածային շնորհներով, հնարավորություն է ստանում հաղորդակցվել Երկնային տիրոջ հետ:

Խոստովանել մեղքը նշանակում է ինքնամաքրվել, հոգեկան հանգստությամբ ձեռնամուխ լինել արարման ոչ միայն սեփական «ես»-ի, այլև ընդհանուրի. մենք-ի կարևորման առումով, քանի որ «ես»-ը կարող է ինքնաիրացվել միայն հավատի, հույսի և սիրո օգնությամբ: Այս արժեքաբանության տիրույթներում մարդասիրության դրսևորման թագն ու պսակը Աստվածամոր կերպարն է:

Մատյանի Զ բանում Աստծո Որդու՝ Հիսուս Քրիստոսի կերպարը, որպես պաշտամունք, ներկայացվում է Աստվածամոր[10] միջոցով՝ իբրև խորհրդանիշը բարու, արարչության նախասկզբի, սիրո փիլիսոփայությունը մարմնավորողի. չէ՞ որ «Մարիամ» բառանվան ստուգաբանությունը նշանակում է ոչ միայն □տառապյալ, դառնացյալ, մոռյլված[11], այլև՝ լուսավոր[12]:

Մարդասիրության հիմնախնդրի քննությունը ամբողջական և բազմաշերտ չենք կարող ներկայացնել, եթե առանձնակի ուշադրություն չդարձնենք աղոթամատյանի ժանրային բնույթին: Ինչպես գրում է ռուս գրականագետը՝«Ժանրային ձևն անհնար է ըմբռնել նրա կենսական արմատներից …տվյալ ստեղծագործության բովանդակությունից, գրական ավանդույթներից դուրս»[13]:

Աղոթամատյանի բարդ ու բազմաշերտ տեքստը ուսումնասիրողներին հնարավորություն է տվել կամային մեկնությունների, այսպես՝ ըստ Մ. Մկրյանի՝ Մատյանը «լիրիկական մեծ պոեմ» է, որը… ընդհանուր գրականության մեջ եղած լիրիկական պոեմներից թերևս ամենալիրիկականն է»[14], իսկ համաձայն Էդ. Զրբաշյանի՝ այն խոհափիլիսոփայական պոեմ է, և «համաշխարհային գրականության մեջ դժվար է ցույց տալ մի ուրիշ այսքան մեծ ծավալի զուտ քնարական պոեմ, որը միաժամանակ այդքան լեցուն լինի ներքին շարժմամբ, հոգեբանական պատճառաբանված անցումներով»[15], և այդ պատճառով էլ փաստորեն «Ժանրի ըմբռնման հարցում միասնություն չկա»[16]: Իր հերթին Արշ. Ղազինյանը հավաստում է, որ «Մատյանի ժանրային բնույթը հատուկ քննության հարց չի դարձել: Մինչդեռ առանց այդ հարցի լուսաբանման թերի կը լիներ ոչ միայն Նարեկացու ստեղծագործության ժանրային կազմի, այլև առհասարակ միջնադարյան հայ գրականության ժանրային համակարգի պատկերը»[17]: Ելակետ ընդունելով վերոնշյալները՝ ավելացնենք, որ «Մատյան ողբերգությունը» մշակութային բազում շերտեր է ներառում և պայմանավորված նրա մեկնության առանձնահատկություններով, մեկնաբանողի ճանաչողությամբ և իմաստաբանությամբ՝ նա առաձգական տեքստ է իր աշխարհիկ և աստվածային զուգամիտումներով: Այդ առումով քննություն է բռնում Ն. Լամբրոնացու մոտեցումը, որը Մատյանը կոչում է «գիրք աղոթից», այսինքն՝ «աղոթագիրք» կամ «աղոթամատյան»: Նմանատիպ վերաբերմունք

---

[10] *Համաձայն «Մատեան ողբերգութեան» ծանոթագրությունների՝ նարեկյան «Զեռագրերի մի մասն ունի «Մաղթանք առ սուրբ Աստուածածին» և նման այլ վերնագրեր, որոնք հաջորդում են կամ սովորական, կամ նշված են լուսանցքներում: Այս բնույթի վերնագրերը մենք կոչում ենք մեկնաբանական վերնագիր: Դրանք ծագել են այս կամ այն գլխի բովանդակությունից դրանց տրված կիրառական, ծիսական նշանակությունից: Զ գլուխը նվիրված է Աստվածածին կույսին: Բանաստեղծը դիմում է նրան. □Աղաչեմ զքեզ, սուրբ Աստուածածին («Մատեան ողբերգութեան», Երևան, 1985, բան Զ, տ. 5, էջ 184):*

[11] Мифы народов мира. Энциклопедия, т. 2. М., 1992, с. 249.

[12] *Հ р. Ա ճ а ռ յ а ն. Հայերեն անձնանունների բառարան, հ. Գ., Երևան, 1946, էջ 249:*

[13] Л. Г р о с с м а н. Поэтика Достоевского. М., 1925, с. 15.

[14] *Մ. Մ կ р յ а ն. Գրիգոր Նարեկացի, Երևան, 1955, էջ 173:*

[15] *Է դ. Զ р բ а շ յ а ն. Գեղագիտություն և գրականություն, Երևան, 1983, էջ 107:*

[16] *Է դ. Զ р բ а շ յ а ն. Գրականության տեսություն, Երևան, 1980, էջ 234:*

[17] *Ա р շ. Ղ а զ і н յ а ն. Գրիգոր Նարեկացի, Բանաստեղծական արվեստ, Անթիլիաս-Լիբանան, 1995, էջ 110:*

են հանդես բերել նաև Հ. Նալյանը, Մ. Չամչյանը, Գ. Ավետիքյանը, Ղ. Ալիշանը, Գ. Զարբհանալյանը, Ե. Դուրյանը, Թ. Գուշակյանը, Ս. Քեշիշյանը և այլք:

Որպես աղոթամատյան՝ այն տեղեկատվական այնպիսի արժեքային համակարգ է, որը հավատացյալ մարդուն երկխոսության մղելով Բարձրյալի հետ, դրդում է նրան ստուգելու իր իմաստության սահմանները և կարևորելու այլոց հետ հարաբերվելու իր հնարավորությունները: Եթե Բարձրյալի հետ երկխոսության միջոցով Մարդը տեղեկացնում է իրեն տանջող հոգսերի, տառապանքի մասին և օգնություն խնդրում, ապա մյուսների հետ հարաբերությունը կարևորելով՝ ինքն իր անվտանգությունն է ապա-հովում՝ նոր աստիճանի բարձրացնելով մարդասիրությունը: Քրիստոնեությունն ընդունում և տարբերակում է աղոթքում «երեք աստիճան. ա) կարդալը, խոնարհումը և զգոնությունը, բ) մարմնականը և հոգևորը հավասար ուժով դիտարկելը, գ) աղոթք առանց բառերի, առանց խոնարհման և նույնիսկ առանց խոկման»[18]: Աղոթքը, որպես քրիստոնեական գրական ստեղծագործության կարևոր ժանր, գործուն կերպով ազդել է վաղ քրիստոնեական և միջնադարյան արվեստի բոլոր տեսակների և ժանրերի բնույթի վրա… և հնարավորություն տվել մարդուն իրականությունը համադրել հոմանիշային լեզվամտածողության միջոցով[19]:

Ֆրանսիացի բանաստեղծ Լյուկ-Անդրե Մարսելը, Նարեկացուն համարելով համաշխարհային գերիրապաշտ գրողներից մեկը, հատուկ ուշադրություն է դարձրել հոմանիշների միջոցով աշխարհը բազմակի ներկայացնելու նրա տրամաբանության վրա. «Նրա նպատակն է հասնել լեզվական լիակատար գունաշարի, ուր հոմանիշներն իրար են հաջորդում իմաստի լրացուցիչ նրբերանգներով: Նարեկացին ուզում է լցնել բառերի միջև եղած արանքը: Այդ պատճառով էլ նա դիմում է հոմանիշների հնարքին և դրանք օգտագործում է այնպիսի առատությամբ, որի հավասարը չկա...»[20]:

Ըստ ամենայնի գնահատելով «Մատյանը»՝ Նարեկացին հանճարեղ պայծառատեսությամբ իր գիրքը համարում է հավիտենական արձան՝ կոթող, որը միահյուսել է հայ բանահյուսությունը և հայ առաքելական քրիստոնեությունը: Նարեկացու «Մատյան ողբերգության» որոշ հատվածների (ԺԲ, ՂԱ) և ժողովրդական աղոթքների հարազատությանն է անդրադարձել Մ. Աբեղյանը[21]: Նարեկացին ինքը «Մատյանի» ԻԶ գլխում խոստովանում է իր ստեղծագործական աղերսները հայ բանահյուսությանը:

Նարեկացու ժամանակներում մեծ ժողովրդականություն էր վայելում բանահյուսության վրա հիմնված թատերգությունը: Դեռևս Խորենացու «Հայոց պատմություն» աշխատության մեջ հիշատակվում են ժամանակի բանավոր արվեստի տեսակները՝ երգք առասպելաց, երգք վիպասանաց, երգք թուելեաց, երգք ցցոց և պարուց: *Անդրադառնալով նարեկյան տողի մեկնություն - բացատրությանը՝ թատերագետ Հ. Հովհաննիսյանը գրում է.*

---

[18] Христианство. Энциклопедический словарь в 4 т., т. 2. М., 1995, с. 142.

[19] В. В. Б ы ч к о в. Византийская эстетика. М., 1977, с. 63.

[20] *Տե՛ս Ա. Չ ո պ ա ն յ ա ն. Երկեր, Երևան, 1966, էջ 271, 303:*

[21] *Մ. Ա բ ե ղ յ ա ն. Երկեր, Գ, Երևան, 1968, էջ 597:*

«Յուցքի[22] *աշխարհիկ-կատակերգական բովանդակությունն ու թատերախաղային նկարագիրը առավել սրությամբ երևում է Նարեկացու՝ արդեն հայտնի տողերում. «Կաքաւս կայթից և ցոյցս վազից խաղալկացն դիւաց գարշելեաց ճարտար խաբողաց ծուլութեամբս իմով շնորհեցի»: Միջնադարյան թատերային զվարճալիքների ու թատրոնի գրեթե բոլոր գծերն այստեղ երևում են՝ սինկրետիզմ (*կաքաւ, կայթ, ցուց, վազք, խաղալիք*) և կերպավորման կամ կերպարանափոխության պահը («ճարտար խաբողաց»): Անդրադառնալով* խաղալիք *բառի մեկնությանը նա շարունակում է՝ կանգ առնելով «խաղալկացն դիւաց գարշելեաց» դարձվածքի մեկնաբանությանը. «…Նարեկացու այս նախադասության ենթատեքստը. մարդկային հոգու կեղծիքն ու սեթևեթանքը համեմատում է «խաղալկացն» ցուցքի հետ»*[23]*: 9-րդ դարից պետականության վերականգնմամբ պայմանավորված՝ բուռն վերելք է ապրում ժողովրդական գուսանական երաժշտությունը և սոցիալ-տնտեսական, քաղաքական-մշակութային կյանքի զարգացմամբ պայմանավորված՝ «քաղաքային թատերական կյանքը»*[24]*:*

Այսպես է ներկայացնում իր ժամանակակիցը եկեղեցի աղոթքի եկած ժողովրդի մի որոշ մասին. «… ոչ թե ահով, այլ խանդաղատագին մաղթանքով կանգնած ենք Աստծո առաջ և խնդրում ենք վերքերի բժշկություն… մեղքերի թողություն խնդրելով մաքրվում և օծվում ենք, այլև հանդերձներով ենք պաճուճվում, ինչպես բոզանոցում կամ թատերախաղում և մտնելով եկեղեցի սնափառ պերճանքով կանգնում Աստծո առաջ մոլեկան հպարտությամբ կանայք՝ բոզերի կերպարանքով և տղամարդիկ՝ արվամոլ և ցոփոգի մեղկությամբ իգանում են պիղծ ցանկությամբ՝ հափրացած վավաշոտ քաղայծների և մատակ ձիերի նման և այնտեղ եկեղեցում, սրբությունների մարմնով, այլև նայվածքով ու կնձաձայն բարբառով: Ինչպես Տերն է ասում՝ «Ով ցանկասիրությամբ է նայում, կատարյալ շնացող է»[25]*: Հայ վաղ միջնադարի խրախճանք-խնջույքային, կառնավալային մթնոլորտին է հպանցիկ անդրադառնում «Մատյանի» հեղինակը. «Նարեկացու ակնարկը՝ «առ թատերս տեսարանաց», «խառնիճաղանջ բազմությանց», – գրում է թատերագետ Հ. Հովհաննիսյանը*[26]*, մեզ տանում է միջնադարյան քաղաք, հեռավոր կերպով հաղորդակից դարձնում նրա թատերական-կառնավալային մթնոլորտին»: Արվեստագետն այնուհետև անդրադառնում է հայ միջնադարյան թատրոնի քիչ թե շատ ամբողջական պահպանված «Աբեղաթոռի հանդեսը» կատակերգությանը, որը ծավալում է քրիստոնեություն-հեթանոսություն եկսայր հակադրությամբ. «– Ղազարե՛, արի՛, ել արտաքս: Վանահայրը խոսում է Քրիստոսի խոսքերով… Վանականները պահանջում են չխանգարել պատարագի օրհներգությունը,*

---

[22] Ցուց *բառը, համաձայն Հր. Աճառյանի, «ուրախութեան խաղ, երգ, պար, կայթիւն…», Ցոյց (ցուցանել) ձևը …«զգործողութիւն գուսանին, որով սա հանդիսացելոց զգործս որևէ անձին ցուցանէ» (Հ ր. Ա ճ ա ռ յ ա ն. Հայերեն արմատական բառարան, հ. IV, Երևան, 1979, էջ 464):*

[23] *Հ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. Թատրոնը միջնադարյան Հայաստանում, Երևան, 1978, էջ 128:*

[24] Музыкальная эстетика стран Востока. М., 1966, с. 358.

[25] *Յ ո վ հ ա ն Մ ա ն դ ա կ ո ւ ն ի. Ճառք, Վենետիկ, 1860, էջ 42, 121:*

[26] *Հ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. Միջնադարյան բեմ թատրոն-եկեղեցի հարաբերությունը և հայ հոգևոր դրաման, Երևան, 2004, էջ 64:*

գուսանները համառում են: Սկսվում է բանակռիվ, որ վերածվում է կռվամարտի, սկսվում է տուրուդմփոց… Այդ ընթացքում ծեր վանականները նստած են կտուրին որպես հանդիսականներ նայում են, գինի են խմում, տապակած կաքավ են ուտում, և նրանց համար գուսանները կաքավի ողբ են երգում»[27]*:*

Այստեղ տեղին է հիշատակել ռուս գրականագետ Մ. Բախտինի մոտեցումը: Նա, անդրադառնալով եկեղեցական, պետական-ֆեոդալական ձևապաշտությունների և խրախճանքային-կարնավալայինի հակադրությանը, կարծում է, որ «…կարնավալային արարողությունները, ծիծաղը բացարձակապես ազատում է նրանց հոգևոր-եկեղեցական բոլոր կարգի դոգմատիկ միստերիայից… դրանց… մոգական-աղոթքային բնույթներից… Ավելին, որոշ կարնավալային ձևերը ուղղակի եկեղեցական արարողությունների պարոդիա են»[28]*, քանի որ նպատակադրվում են ի ցույց դնել աշխարհիկ և հոգևոր կառավարիչների* ձևապաշտական և իրական մարդասիրությունը*:*

Նարեկացու քաղաքակրթական աշխարհի ձևապաշտական և իրական մարդասիրության բացահայտումները դրսևորվում են նաև նրա լեզվամտածողության մեջ. հավատը, հույսը և սերը շեշտադրելու միտումով էլ նա դիմում է հանգի գործածությանը և հինգվանկ անդամներով կազմված ոտանավորին, որում բոլոր տողերը յամբ-անապեստով են ավարտվում: Իէ բանում Նարեկացին բացատրում է, որ ինքը, յուրաքանչյուր տողի սկզբնատառը կրկնելով, այն դարձնում է նաև վերջին բառ, ասել կուզի՝ հորինում է շղթայաձև բանաստեղծություն, որում ասելիքը անգուսպ հեղեղի պես հորդում է, և նրա քանքարը ոտնատակ է տալիս բանաստեղծական ցանկացած սահմանափակում և կաղապար: Այս առումով տեղին է հիշատակել գրականագետ Դ. Լիխաչովի հետևյալ կարծիքը: Նա, կարևորելով միջնադարյան գրականության մեջ հոմանիշների առատ գործածությունը, գրում է. «Այնտեղ հոմանիշները սովորաբար դրվում են կողք կողքի, նրանք ձուլված չեն, բայց և միմյանցից բաժանված էլ չեն… և ընթերցողի ուշադրությունը գրավում է… այն ամենարնդհանուրը, որ կա դրանց մեջ»[29]*: Հիմք ընդունելով այս մոտեցումը՝ հնարավորություն ենք ստանում հավատը, հույսը և սերը մարդասիրության ակունք դիտարկելը հիմնավորել՝ կարևորելով Մատյանում առանձնահատուկ նշանակությամբ գործածված □Երանություն□ բառը: Երանելիությունը պարունակում էր առաքինությամբ* մտավոր կատարելության իմացության հասնելու իմաստը, *այն Մարդուն օժտում էր և մղում նպատակադրված մարդասիրության: Նկատի առնելով Մարդու բազմաչափ բնույթը՝ Նարեկացին, ժամանակով պայմանավորված, ընդունում է Մարդու կերպափոխությունը այն ժամանակի հոլովույթում, որով նա առաքինաբար կարողանում է դիմակայել կյանքի դժվարություններին և փորձություններին: Մարդն այս պարագայում իրեն հնարավորություն է վերապահում իր վեց զգայարանների իրատես օգտագործման շնորհիվ ճիշտ գնահատել, ճանաչել իրեն՝ պահպանելով*

[27] *Նույն տեղում, էջ 249:*

[28] М. Б а х т и н. Творчество Франсуа Рабле. М., 1965, с. 9.

[29] Д. С. Л и х а ч е в. Культура Руси времен Андрея Рублева и Епифания Премудрого (конец XIV – начало XV вв.). М.–Л., 1962, с. 56–57.

համակեցության կանոնները և երևույթների միջև կապը տեսնել: Տվյալ պարագայում կամքը՝ որպես գործողության շարժիչ ուժ, պարբերաբար լիցքավորում է նպատակադիր մարդասիրությունը որպես հավատի, հույսի և սիրո անսպառ աղբյուրի: Ասելիքն առավել ընդգծելու համար դիմենք -4 ծանոթագրությանը. «Ակնարկում է ավետարանում ասվածը…, թե ով իր հոգու անդաստանը մշակելու համար ձեռքն է առնում մաճը, չպետք է հետկույս նայի՝ հրապուրվելով նախկին աշխարհիկ զբաղումներով, որպեսզի արորն ուղիղ ակոսով ընթանա՝ նրան տանելով դեպի ճշմարիտ նպատակը»[30]:

Հեղինակը Սուրբ Երրորդությանը աղերսում է օգնել Մարդուն, որ նա նորոգվի աստվածային լույսով և զորությամբ, նյութապաշտ մեղքերից նրան թողություն շնորհի: ԼԴ բանում էլ հեղինակը խոստովանում է, որ բեմահարթակից ժողովրդին ուղղված քարոզից առաջ ինքը Սուրբ Հոգուց ուժ և զորություն է աղերսում, որպեսզի Նա լուսավորի իր միտքը աստվածային գիտությամբ՝ ասելիքը պատշաճ շարադրելու համար: ԺԴ բանում Սուրբ Երրորդությունը «Երրեակ անձնաւորութիւն է՝ համայն անքնին», իսկ ԺԳ բանում նա Քրիստոսին «անստվեր լույս» է անվանում, Սուրբ Հոգուն՝ երկնային սեր, իսկ Հորը «…պատճառ սիրոյ երկնայնոյ անստուէր լուսոյ»:

Նարեկյան մարդասիրությունն իր աշխարհիկ և աստվածային ակունքներով հնարավորություն է ընձեռում մարդուն տնօրինելու իր կյանքը՝ չվախենալով մահից: Մարդու հիմնախնդրի ամբողջական բացահայտման նկատառումներով էլ Նարեկացին (ԿԶ, Դ, ԻԶ, ԼԱ, ՃԵ բաներում) անդրադարձել է մահվան գաղափարին՝ որպես կյանքի բաղկացուցիչ: Նրանցից յուրաքանչյուրը կուտակված գիտելիքի, կենսափորձի, համակեցության մշակված նորմերի համակարգ է, ուստի մարդը, սկիզբն ու վերջը դնելով ժամանակի և տարածության շղթայի մեջ, ինքն իր համար փորձում է պարզել, թե որտեղ է սկիզբը, որտեղ ավարտը. որտեղ է մահանում մարդը ֆիզիկապես իր մահկանացուն կնքելուց հետո, այնտե՞ղ, որտեղ մոռանում են բարոյական հրամայականների և մարդկային համակեցության պահպանման անհրաժեշտությունը՝ հանուն մարդասիրության:

ВЕРА – ИСТОЧНИК ГУМАНИЗМА – ПО «КНИГЕ СКОРБНЫХ ПЕСНОПЕНИЙ» ГРИГОРА НАРЕКАЦИ

МАРИАМ МАРГАРЯН, МАРИ ЗАКАРЯН

Р е з ю м е

В «Книге скорби» Григора Нарекаци – философа, политика, величайшего мыслителя, обладающего космическим полетом мысли, рассматриваются

[30] *Գ ր ի գ ո ր Ն ա ր է կ ա ց ի. Մատեան ողբերգութեան, աշխատասիրությամբ Պ. Մ. Խաչատրյանի և Ա.Ա. Ղազինյանի, Երևան, 1985, էջ 1010:*

общечеловеческие проблемы, она наполнена жизнелюбием, гуманизмом автора, источником которого является любовь к Всевышнему, к природе. Григор Нарекаци определяет границы бытия человека триадой: вера, любовь и надежда; с помощью веры дополняют друг друга разумное и чувственное, с помощью веры удается сохранить национальные ценности, выйти из онтологического кризиса и обратить свой взор к духовному миру.

BELIEF – THE CRADLE OF HUMANISM BY GRIGOR NAREKATSI'S "BOOK OF LAMENTATIONS"

MARIAM MARGARYAN, MARY ZAKARYAN

S u m m a r y

All-humanitarian problems are examined in philosopher, politician, great thinker, gifted with space flight of thought Grigor Narekatsi's "Book of Lamentations". It is filled with life-loving, humanism of the author, whose cradle is love to God and to Nature. Grigor Narekatsi determines bounds of man's existence by trinity of belief, love and hope; through belief logic and sense are the complement of one another, with the help of belief it is possible to maintain national values, to leave ontologic crisis and be directed towards spiritual world.